

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԱՐՏԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող  
ՀԶՀԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Գ. Խլղաթյանի կողմից  
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2016թ. թիվ 60-Ա  
որոշմամբ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ուղերձը.....	2
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	3
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	3
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	4
2.3 Համայնքի տարածքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....	8
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները .....	8
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՄ/ վերլուծություն.....	12
3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	13
3.1 Համայնքի տեսլականը.....	13
3.2 Համայնքի զարգացման ռազմավարություն.....	14
3.3 Համայնքի զարգացման 2017-2021թթ գերակայությունները.....	15
4. Ոլորտային ծրագրերը և դրանց ֆինանսավորումը.....	15
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	21

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁ

ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները, նրանց գործունեության բնագավառներում (ուլորտներում), ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Արտենի համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են համայնքային ժողովի ժամանակ համայնքային ակտիվ խմբի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը համայնքի աշխատակազմի հետ միասին մշակել են համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն ներառում է նաև Արտենի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Արտենի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Արտենի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիրը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի համայնքը գտնվում է հանրապետության արևմտյան մասում, ծովի մակերևույթից 1200մ. բարձրության վրա: Հեռավորությունը՝ Երևանից 85կմ. , Աշտարակից 65կմ. ,Թալինից 18կմ.: Տարեկան միջին ջերմությունը՝ 10 ,6° է: Քամիների գերակշռող ուղղությունը արևմուտքից է, միջին արագությունը՝ 2,9 մ /վրկ.: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 2890մմ. է : Արտենի գյուղը հիմնադրվել է 1952թ-ին : Կլիմայական պայմանները Արտենի գյուղում բնութագրվում են ոչ շատիստ ցրտով: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -21° C է, չնայած լինում են տարիներ, երբ ձմեռները լինում են երկարատև և խստաունջ: Ամռան վերջին երկու ամիսներին շատ շոգ է լինում /35°-40°/: Գյուղի միջով է անցնում Երևան-Գյումրի երկաթուղային գիծը, ինչպես նաև Երևան-Արմավիր-Գյումրի ավտոմայրուղին:

Նախկինում ունեցել է Բաղութլի, Բողութլու, Բուղուտլու անվանումները: Արտենի է վերանվանվել [1950](#)թվականի [օգոստոսի 31](#)-ին: Գյուղից 2.5 կմ հյուսիս-արևելք գտնվում է [Արտին լեռը](#), որտեղ հայտնաբերվել են հին քարե դարի բնակավայրեր, գործիքներ և զենքեր: Այս լեռան Սատանի դար, Արեգունի և Հարավային բլուրները եղել են ամենահին քարեդարյան կայանները: Արտենի լեռը հին Հայաստանի յոթ սրբազան որսատեղիներից մեկն էր:

Արտենիի առկա բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3676 մարդ, որից 1714-ը տղամարդիկ են, 1962-ը՝ կանայք:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

0-1 տարեկան – 45 մարդ

1-2 տարեկան – 52մարդ

3-4 տարեկան – 91 մարդ

5-6 տարեկան – 81 մարդ

7-10 տարեկան – 141 մարդ

11-14 տարեկան – 129 մարդ

15-17 տարեկան – 121 մարդ

18-22 տարեկան – 509 մարդ

23-45 տարեկան – 1265 մարդ

46-62 տարեկան – 968 մարդ

63 և ավելի տարեկան – 274 մարդ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝

- աշխատունակ բնակչություն – 2490 մարդ
- թոշակառուներ՝ 402
- հաշմանդամներ - 98 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 18 մարդ
- ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ – 1
- տնային տնտեսությունների թիվը – 840
- նպաստառու ընտանիքների թիվը – 98
- միայնակ մոր երեխա – 3
- ամուսնալուծված անձերի երեխաներ – 7
- միայնակ չաշխատող թոշակառու – 5

## *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

### *ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ*

Արտենի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 9 անդամներով: Արտենի համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 13 հոգուց:

Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծիք և թափանցիկ աշխատանքային միջավայր,
- թարմացնել համայնքապետարանի կայքը՝ բնակչության հետ կապը առավել արդյունավետ դարձնելու համար,
- ապահովել համայնքի բնակիչների մասնակցությունը ավագնու նիստերին՝ իրենց հուզող հարցերի քննարկման ժամանակ:

### *ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ*

Համայնքում գործում է «Արտենիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ 19 աշխատատեղով: Արտենիի առողջության կենտրոնն իրականացնում է

ամբուլատոր բուժօգնություն և կարիք ունի արդիական բժշկական սարքերով համալրման, կադրերի վերապատրաստման:

Համայնքում գործում է 2 դեղատուն՝ 2 աշխատողով: Համայնքը նախկինում տվել է զգալի հաջողությունների հասած մարզիկներ: Այժմ միջոցների սղության պատճառով չկան բավարար պայմաններ սպորտի զարգացման համար:

*ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում կա 481 առանձնատուն 128667քմ տարածքով, թվով 57 բազմաբնակարան շենք՝ 168 բնակարաններով և 5 եռահարկ շենք՝ 120 բնակարանով: Համայնքի հողօգտագործման ցուցանիշները ներկայացված են աղյուսակում:

**Աղյուսակ 2. Համայնքի հողօգտագործման ցուցանիշները**

Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
Համայնքի վարչական տարածքը	3707,13
Գյուղատնտեսական հողեր	3439,83
Արտավայր	1061,89
Վարելահողեր	1600,71
Խոտհարք	-----
Այլ հողեր	478,14
Բնակավայրերի հողեր	180,08
Բնակելի կառուցապատման	145,47
Հասարակական կառուցապատման	6,09
Խառը կառուցապատման	-----
Ընդհանուր օգտագործման	25,12
Այլ հողեր	3,40
Արտադրական նշանակության հողեր	27,96
Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակառուցվածքի հողեր	18,99
Անտառային հողեր	-----
Հատուկ պահպանության	7,61
Հատուկ նշանակության	-----
Զբային	32,66

*ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Համայնքն ապահովված է արտեզյան ջրով: Համայնքը տարբեր ծրագրերի միջոցով գրեթե ավարտին է հասցրել ջրագծի վերանորոգումը՝ 15 կմ-ից 13 կմ-ը արդեն փոխված է, ինչը հնարավորություն է տալիս համայնքում ապահովել 6-8ժամյա ջրամատակարարում: Տեղադրված են ջրաչափեր և դիտահորեր:

Արտենի համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի էլցանցեր ընկերության կողմից:

2016 թվականին ավարտվել է գազաֆիկացման համակարգի կառուցումը և այն անհատույց օգտագործման է տրամադրվել <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին: Նախատեսվում է, որ 2017 թվականին արդեն կսկսվեն բնակելի տների գազաֆիկացումները:

Արտենի համայնքն ունի ներհամայնքային 13,5կմ փողոցներ և ճանապարհներ: Ճանապարհների եւ փողոցների մեծ մասն անբարեկարգ է:

Արտենիի ընդհանուր տեսքի համար չափազանց կարեւոր է գյուղի բարեկարգումը՝ փողոցների լուսավորությունը, աղբամանների տեղադրումը, սանիտարական վիճակի ապահովումը:

Համայնքի լուսավորությունն առաջնային կարեւորության հարցերից է և անհրաժեշտ է ստեղծել լուսավորության ցանց: 2016թ. համայնքում լուսավորվել է 5 փողոց՝ 2775մ, սակայն համայնքի զգալի մասը դեռևս առանց լուսավորության է:

Համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպվում են Արտենիի կոմունալ ծառայության կողմից: Աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում, փողոցներում աղբամաններ չեն տեղադրվել և բնակիչներն աղբը դնում են մայթերին, որտեղից աղբահավաք մենքենան հավաքում է: Աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի եւ սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Աղբահանության բնագավառում դեռևս շատ անելիքներ կան:

### *ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱՍ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

Համայնքապետարանի, համայնքի դպրոցների, մանկապարտեզի, առողջության կենտրոնի շրջակայքում պարբերաբար իրականացվում են ծառատունկեր: Շրջակա բնական միջավայրի պահպանության առումով համայնքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել զբոսայգի,
- փողոցներում տեղադրել աղբամաններ,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

## *ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Արտենի համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից: Գյուղում գործում են 9 խանութներ:

### *ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*

Արտենիում գործում են հանրակրթական երկու դպրոցներ՝ մեկ հիմնական և մեկ միջնակարգ, որը հիմնանորոգվել է: Միջնակարգ դպրոցում սովորում է 270 աշակերտ, աշխատում՝ 45 հոգի, հիմնական դպրոցում սովորում է 107 աշակերտ, աշխատում՝ 32 հոգի: Դպրոցներն ունեն վերանորոգման և գույքի կարիք:

Համայնքում գործում է 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Հաճախում է 92 սան, աշխատում է 15 մարդ: Վերանորոգման և գազաֆիկացման կարիք ունի մանկապարտեզի շենքը: Մանկապարտեզն ունի նաև գույքի, բակի բարեկարգման և խաղահրապարակի թարմացման կարիք:

### *ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

Համայնքային պատկանելիության մշակութային կառույցն ունի վերանորոգման կարիք:

Մշակույթի տանը գործում է գրադարան, որի գրքային ֆոնդը վաղուց է, ինչ չի համալրվել նոր գրքերով: 2016 թվականին գրադարանում առկա գրքերի քանակը կազմում է 4500 կտոր: Ընթերցողների թիվը ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակում կազմել է 180 մարդ:

Մշակույթի տանը գործում են պարի և նկարչական խմբակներ:

Երիտասարդների համար չկան ժամանցային վայրեր: Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մեծ մասը բռնում է արտագաղթի ճանապարհը և ինքնահաստատվում օտար երկրներում:

### *ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնվել են պտղատու այգիներ, ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի, բոստանային կուլտուրաներ:

Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է տարբեր տեսակի պտուղների, հացահատիկի, բոստանային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հողագործությունն ու անասնապահությունը հանդիսանում են Արտենի համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոռոգման ջրի թանկ լինելով, ոռոգման համակարգի քայքայված վիճակով, հակակարկտային կայանների բացակայությամբ:



Գյուղատնտեսության զարգացման համար խոչընդոտ են հանսիսանում նաև գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեքը, բարձր բերքատվության սերմերի, խորհրդատվության, գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորված սպառման բացակայությունը:

Ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի 60%-ը՝ ինքնահոս եղանակով:

### 2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Արտենիում գալիք 2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ կառավարության, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ, պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ
- Պետական պատվերի շրջանակներում առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Պլանավորվող 5 տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ կառավարության, ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

### 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են հիմնականում վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի և տուրքերի և մեծամասամբ ֆինանսական

համահարթեցման դոտացիաների հաշվին: Շատ ցածր է համայնքի ֆինանսական անկախության մակարդակը: Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք չնչին չափերով են աճում: Այդ պատճառով, թեև տեսականորեն պետք է հաջորդ տարիների եկամուտների կանխատեսման ժամանակ եկամուտների որոշակի աճ նախատեսվեր, սակայն սեփական եկամուտների մասով դա չի արվել՝ իրատեսական լինելու նպատակով:

**Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. Բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2018-2021թթ. Բյուջեների մուտքերի կանխատեսումը /հազար դրամ/**

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015 փաստ	2016 նախատ	2016 փաստ	2017 նախատ	2018 կանխ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
1	2								
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒԻՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	<b>96278,0</b>	<b>86708.4</b>	<b>59469.9</b>	<b>85549.0</b>	<b>85849.0</b>	<b>86149.0</b>	<b>86449.0</b>	<b>86749.0</b>
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎ ՄՈՒԻՏՔԵՐ (1+2+3)*</b>	<b>96278,1</b>	<b>86708,4</b>	<b>59469,9</b>	<b>85549,0</b>	<b>85849.0</b>	<b>86149.0</b>	<b>86449.0</b>	<b>86749.0</b>
1.	<b>ՀԱՐԿԵՐԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	<b>22140,3</b>	<b>22945.4</b>	<b>18608.6</b>	<b>23277,1</b>	<b>23477.1</b>	<b>23677.1</b>	<b>23877.1</b>	<b>24077.1</b>
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	<b>16816,1</b>	<b>16797.4</b>	<b>13969.1</b>	<b>16731,7</b>	<b>16731,7</b>	<b>16731,7</b>	<b>16731,7</b>	<b>16731,7</b>
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	202,8	189.1	166.324	189,1	189,1	189,1	189,1	189,1
	Հողի հարկ	16613,2	16605.3	13802.8	16542,6	16542,6	16542,6	16542,6	16542,6
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	<b>4912,2</b>	<b>5826.0</b>	<b>4450.5</b>	<b>6160,4</b>	<b>6360.4</b>	<b>6560.4</b>	<b>6760.4</b>	<b>6960.4</b>
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4912,2	5826.0	4450.5	6160,4	6360.4	6560.4	6760.4	6960.4
1.3	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	<b>412,0</b>	<b>325.0</b>	<b>189.0</b>	<b>365,0</b>	<b>365.0</b>	<b>365.0</b>	<b>365.0</b>	<b>365.0</b>
	Տեղական տուրքեր	412,0	325.0	189.0	365,0	365.0	365.0	365.0	365.0
1.4	<b>Ապրանքների մատակարարումից նստաշուկայի և ներմատուցումից այլ պարտադիր վճարներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	Պետական տուրքեր	0	0	0	0	0	0	0	0
1.5	<b>Այլ հարկային եկամուտներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	0	0	0	0	0	0	0	0
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջեի վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում մայր հարկերի գումարների նկատմամբ	0	0	0	0	0	0	0	0
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԱՄԱՄԱՇՆՈՐ ՀՆԵՐ</b>	<b>68220,9</b>	<b>57740.0</b>	<b>53047.6</b>	<b>56308,9</b>	<b>56308,9</b>	<b>56308,9</b>	<b>56308,9</b>	<b>56308,9</b>
2.1	<b>Ընթացիկ պարտաքին պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
2.2	<b>Կապիտալ պարտաքին պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
2.3	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>52589,2</b>	<b>57740.0</b>	<b>53047.6</b>	<b>56308.9</b>	<b>56308.9</b>	<b>56308.9</b>	<b>56308.9</b>	<b>56308.9</b>
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	52589.2	56308.9	51616.5	56308.9	56308.9	56308.9	56308.9	56308.9
բ)	Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ	631.7	1431.1	1431.1	0	0	0	0	0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	15000,0	0	0	0	0	0	0	0
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ կապիտալ իջնանսավորման նպատակով ստացվող պաշտոնական նորամաշնորհներ	0	0	0	0	0	0	0	0
2.4	<b>Կապիտալ ներքին պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>

ա)	Պետական բյուջեի ցկայի տալիս էրի ֆինանսավորմանն ապատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	0	0	0	0	0	0
բ)	ՀՀ այլ համայնքների ցկայի տալիս էրի ֆինանսավորմանն ապատակով ստացվող պաշտոնական նորամաշնորհներ	0	0	0	0	0	0	0	0
<b>3.</b>	<b>ԱՅԼԵԿԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>5916,9</b>	<b>6023.0</b>	<b>5458,9</b>	<b>5963,0</b>	<b>6063.0</b>	<b>6163.0</b>	<b>6263.0</b>	<b>6363.0</b>
<b>3.1</b>	<b>Տնկույթներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>3.2</b>	<b>Շահագրգիռներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>3.3</b>	<b>Գույքի վարձակալությունից կամ ուսուցիչներ</b>	<b>1279,9</b>	<b>1453.0</b>	<b>1119.3</b>	<b>1453,0</b>	<b>1453,0</b>	<b>1453,0</b>	<b>1453,0</b>	<b>1453,0</b>
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	959,9	973.0	679.314	973,0	973,0	973,0	973,0	973,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0	0	0	0	0	0	0	0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության համայնքի սեփականության ըստ պետական հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0	0	0	0	0	0	0	0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	320,0	480.0	440.0	480,0	480,0	480,0	480,0	480,0
<b>3.4</b>	<b>Համայնքի բյուջեի եկամուտներն ապրանքների մատակարարումից ճանաչություններին մատուցումից, այդ թվում</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորություններին իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	0	0	0	0	0	0	0	0
<b>3.5</b>	<b>Վարչական գանձումներ</b>	<b>9,0</b>	<b>40.0</b>	<b>89.0</b>	<b>20.0</b>	<b>20.0</b>	<b>20.0</b>	<b>20.0</b>	<b>20.0</b>
	Տեղական վճարներ	9,0	40.0	89.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամակառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	0	0	0	0	0	0	0	0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	0	0	0	0	0	0	0	0
<b>3.6</b>	<b>Մուտքեր և սուբսիդիաներ, սուբսիդիաներից</b>	<b>20,0</b>	<b>30.0</b>	<b>10.0</b>	<b>10,0</b>	<b>10,0</b>	<b>10,0</b>	<b>10,0</b>	<b>10,0</b>
	Վարչական իրավասիտուսների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից կամ ուսուցիչներ	20,0	30.0	10.0	10,0	10,0	10,0	10,0	10,0
	Մուտքերի համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող սուբսիդիաներից	0	0	0	0	0	0	0	0
<b>3.7</b>	<b>Ընթացիկ կոչ պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>3.8</b>	<b>Կապիտալ կոչ պաշտոնական նորամաշնորհներ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>3.9</b>	<b>Այլ եկամուտներ*</b>	<b>4608,0</b>	<b>4500.0</b>	<b>4240,6</b>	<b>4500,0</b>	<b>4600.0</b>	<b>4700.0</b>	<b>4800.0</b>	<b>4900.0</b>
	Համայնքի գույքի նպատակառաձգված սուբսիդիաների մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեի կատարվող հատկացումներից մուտքեր	5091,4	11000.0	8352.2	6500.0	6800.0	7100.0	7400.0	7700.0
	Օրենքով իրավականալի կտրված սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	4608,0	4500.0	4240,6	4500.0	4600.0	4700.0	4800.0	4900.0
<b>II.</b>	<b>ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻ ՑՄՈՒՐՏՔԵՐ (1+2+3+4)</b>	<b>8105,0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>1.</b>	<b>Հիմնական միջոցների իրացումից մուտքեր</b>	<b>8105,0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>

	Անշարժ գույքի հրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	Շարժական գույքի հրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	Այլ հիմնական միջոցների հրացումից մուտքեր	8105,0	0	0	0	0	0	0	0
<b>2.</b>	<b>Պաշարների հրացումից մուտքեր</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>3.</b>	<b>Բարձրարժեք ակտիվների հրացումից մուտքեր</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>4.</b>	<b>Զարտադրված ակտիվների հրացումից մուտքեր</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	Հողի հրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների հրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
<b>III.</b>	<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐ ԴԻՕԳՏԱԳՈՐԾ ՄԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄՊԱԿԱՍՈՒՐԻ (ԴԵՖԻՑԻՏ)</b>								
	<b>ՖԻՆԱՆՍԱՎՈՐ ՄԱՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>Ա.</b>	<b>ՆԵՐՔԻ ՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ (1+2)</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>1.</b>	<b>ՓՈՒՍԱՌՈՒՄԻ ՋՈՑՆԵՐ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>1.1</b>	<b>Արժեթղթեր</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	- թողարկումից տեղաբաշխումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	- հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0
<b>1.2</b>	<b>Վարկեր</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	- վարկերի ստացում	0	0	0	0	0	0	0	0
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0
<b>1.3</b>	<b>Փոխատվություններ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	- բյուջե տային փոխատվությունների ստացում	0	0	0	0	0	0	0	0
	- ստացված փոխատվությունների գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0
<b>2.</b>	<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆԱՎՏԻՎՆԵՐ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>2.1</b>	<b>Բաժնետոմսերի կապիտալում այլ մասնակցություններ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	- համայնքային սեփականության բաժնետոմսերի կապիտալում համայնքի մասնակցության հրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցների ցահամայնքի բյուջե մաս հանումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	- բաժնետոմսերի կապիտալում այլ մասնակցությունները	0	0	0	0	0	0	0	0
<b>2.2</b>	<b>Փոխատվություններ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	- փոխատվությունների տրամադրում	0	0	0	0	0	0	0	0
<b>2.3</b>	<b>Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>2.4</b>	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>2.5</b>	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների ցվարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>2.6</b>	<b>Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի	0	0	0	0	0	0	0	0

	յուզեիմիջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
<b>Բ.</b>	<b>ԱՐՏԱՔԻՆԱՂՔՑՈՒՐՆԵՐ</b>	0	0	0	0	0	0	0	0
<b>1.</b>	<b>ՓՈՒՍԱՌՈՒՄԻՋՈՑՆԵՐ</b>	0	0	0	0	0	0	0	0
<b>1.1</b>	<b>Արժեթղթեր</b>	0	0	0	0	0	0	0	0
	-թողարկումից ստեղծված խումբից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0
	-հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0
<b>1.2</b>	<b>Վարկեր</b>	0	0	0	0	0	0	0	0
	-վարկերի ստացում	0	0	0	0	0	0	0	0
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0
<b>1.3</b>	<b>Փոխատվություններ</b>	0	0	0	0	0	0	0	0
	-փոխատվությունների ստացում	0	0	0	0	0	0	0	0
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	0	0	0	0	0	0	0	0

\*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

## **2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ /ՈՒԹՀՍ/ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Համայնքի տարածքով են անցնում Երևան-Թբիլիսի երկաթուղային գիծը և Երևան-Արմավիր-Գյումրի ավտոմայրուղին:
- Համայնքն ունի տարբեր բուհերն ավարտած որոկյալ կադրեր:
- Համայնքապատկան հողերի մեծ տարածքների առկայություն:
- Արտեզյան ջրերի և հորերի առկայություն:
- Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարումը:
- Որակյալ գյուղմթերքների քանակության առկայություն:
- Գյուղատնտեսության ոլորտում խոշոր ներդրումներ կատարելու հնարավորություն:
- Վերամշակող ձեռնարկությունների կառուցման հնարավորություն:

Համայնքի թույլ կողմերն են՝

- Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- Վաղ գարնանային ցրտահարությունները և բնական տատերային աղետների հաճախականությունը
- արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
- փողոցների ոչ բարվոք վիճակը
- գազի բացակայություն

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը

- Տեղացի և օտարերկրյա ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը՝ համայնքի տարածքում արտադրական և այլ շենքային պայմանների տրամադրումը:

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները
- Հողերի ամայացումը
- Գործազրկության մակարդակի աճը
- Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- Արտագաղթը

### **3 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

#### **3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ**

Արտենի համայնքի տեսլականը /հեռահար նպատակը/ համայնքի զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել 5 տարի հետո:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականը հետևյալն է՝

համայնքը դարձել է առավել գրավիչ բնակիչների համար,

ունենք բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ,

բնակչությանը մատուցվող ծառայությունների (կրթության, ջրամատակարարման, աղբահանության և այլն) շրջանակի ընդլայնվել և որակի բարձրացել է,

համայնքում ստեղծվել են աշխատատեղեր, զարգացել են առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը,

երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծվել են բավարար պայմաններ, ակտիվացել է մշակութային կյանքը,

համայնքի բնակիչներն ունեն բարելավված կենցաղային պայմաններ,

համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը բաց է ու թափանցիկ, բնակիչները մասնակից են ՏԻՄ բոլոր օղակների որոշումների կայացմանը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարեւորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և գործարարների սերտ համագործակցությունը:

### 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացման ռազմավարությունը հետևյալն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ և գրավիչ:

Համայնքի ռազմավարական նպատակներն են՝

- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- Բարելավել կրթական և մշակութային ոլորտի համայնքային կազմակերպությունների գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան
- Շարունակել և աստիճանաբար ընդլայնել համայնքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր
- Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

### 3.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտենի համայնքի զարգացման 2017-2021 թվականների հիմնական գերակայություններն են՝

- տեղական ինքնակառավարման համակրգի որակի և արդյունավետության բարձրացումը
- համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի էական բարելավումը
- բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը, այդ նպատակով զբոսայգու և խաղահրապարակի հիմնումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, փողոցների բարեկարգումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը
- համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովումը, այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը
- գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը
- նախադպրոցական կրթական համակարգի շարունակականության ապահովումը
- մշակութային կյանքի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը

#### **4. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

Արտենի համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ստեղծել գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Չարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության եւ գործարարների համատեղ գործունեությունը:

Աշխատատեղեր ստեղծելու համար համայնքը կպարտավորվի նաև ներդրողների համար տեղական հարկերի և տուրքերի մասով սահմանել արտոնյալ պայմաններ և ցուցաբերել օժանդակություն:

#### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳԻՐ**

**<<Հակակարկտային կայանների տեղադրում>>**

- **Ծրագրի նպատակը** – Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը:



- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Գյուղացին կունենա շուկայում մրցունակ արտադրանք, համայնքում կստեղծվի սեզոնային մոտ 300 աշխատատեղ, կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:
- **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**  
 ա/ համայնքի բյուջե – 28.000.0 հազ. դրամ  
 բ/ այլ –
- **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Հակակարկտային կայանների տեղադրում	28000.0	5600.0	5600.0	5600.0	5600.0	5600.0	2017	2021

**ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳԻՐԵՐ**  
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- **Ծրագրի նպատակը** - Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ:
- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** -2017-2021 թթ. ընթացքում համայնքում ներհամայնքային ճանապարհները կլինեն բարեկարգ, ճանապարհներում կվերանան ջրափոսերը, դրանք կդառնան անցանելի ու հարմարավետ ինչպես տրանսպորտային միջոցների, այնպես էլ հետիոտների համար՝ տարվա բոլոր եղանակներին:
- **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ, հյուրեր:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**  
 ա/ համայնքի բյուջե –10.000 հազ. դրամ  
 բ/ այլ -
- **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Ներհամայնքային և ճանապարհների բարեկարգում	10000.0	2000.0	2000.0	2000.0	2000.0	2000.0	2017	2021

Փողոցների գիշերային լուսավորության անցկացում

- **Ծրագրի նպատակը** - Ունենալ լուսավոր համայնք:
- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** - համայնքը կունենա լուսավոր փողոցներ, որով բնակիչները հնարավորություն կունենան տեղափոխվելու անվտանգ և ապահով:
- **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ, հյուրեր:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա/ համայնքի բյուջե – 20.000.0 հազ. դրամ

բ/ այլ –

- **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	20.000.0	5.000.0	3.000.0	4.000.0	4.000.0	4.000.0	2017	2021

Խաղահրապարակի և զբոսայգու հիմնում

- **Ծրագրի նպատակը** – Ստեղծել երեխաների համար զարգացման միջավայր:

- Ծրագրից ակնկալվող արդյունքները – առողջ ապրելակերպի խրախուսում, երեխաների ներդաշնակ զարգացում, զբոսայգու հիմնում:
- Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ:
- Ծրագրի ֆինանսական աղբյուրները

ա/ համայնքի բյուջե – 5.000.0 հազ. դրամ

բ/ այլ՝ բարեգործական կազմակերպություններ -15.000.0 հազ. դրամ

- Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Խաղահրապարակի և զբոսայգու հիմնում	20.000.0	8000.0	12.000				2017	2018

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳԻՐ

### Կանաչ գոտիների ստեղծում

- Ծրագրի նպատակը – բարելավել բնապահպանական միջավայրը:
- Ծրագրից ակնկալվող արդյունքները – օդի աղտոտվածության նվազեցում, թթվածնի քանակի ավելացում:
- Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ:
- Ծրագրի ֆինանսական աղբյուրները

ա/ համայնքի բյուջե – 1.000.0 հազ. դրամ

բ/ այլ՝ <<Էյ թի Փի>> բարեգործական հիմնադրամ – 2.000.0 հազ. դրամ

- Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Կանաչ գոտիների	3.000.0	1.000.0	1000.0	1.000.0			2017	2019

ստեղծում									
----------	--	--	--	--	--	--	--	--	--

Ամբողջ համայնքում աղբահանության կազմակերպում

- **Ծրագրի նպատակը** – ապահովել համայնքի մաքրությունը:
- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – ունենալ մաքուր, գրավիչ համայնք:
- **Ծրագրի հիմնական շահառուները** - համայնքի բնակիչներ:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա/ համայնքի բյուջե – 10.000.0 հազ. դրամ

բ/ այլ – 5.000.0 հազ. դրամ

- **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Ամբողջ համայնքում աղբահանության կազմակերպում	15.000.0	2.500.0	3.500.0	3.000.0	3.000.0	3.000.0	2017	2021

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳԻՐ

Մշակույթի տան նախասարահի և դահլիճի նորոգում

- **Ծրագրի նպատակը** - Համայնքում ունենալ մշակութային միջոցառումների կազմակերպման համար պատշաճ շենքային պայմաններ:
- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – մշակութային կյանքի ակտիվացում, մշակութային ժառանգության պահպանում և զարգացում:
- **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ, հյուրեր:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա/ համայնքի բյուջե –20.000.0 հազ. դրամ

բ/ այլ - 10.000.0 հազ. դրամ

**Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Մշակույթի տան նախասրահի և դահլիճի նորոգում	30.000.0	1.000.0	2.000.0	6.000.0	10.000.0	11.000.0	2017	2021

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳԻՐ**

Համայնքի մանկապարտեզի պահպանում և գազաֆիկացում

- **Ծրագրի նպատակը** – ապահովել մանկապարտեզ հաճախող երեխաների համար տաք, զրավիչ և զարգացնող միջավայր:
- **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – համայնքում 15 աշխատատեղի պահպանում, մանկապարտեզ հաճախող երեխաների թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետություն:
- **Ծրագրի հիմնական շահառուները** – մանկապարտեզ հաճախող մոտ 100 երեխաներ և ծնողներ:
- **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա/ համայնքի բյուջե – 90.000.0 հազ. դրամ

բ/ այլ – 10.000.0 հազ. դրամ

**Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեքը հազ. դր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
			2017	2018	2019	2020	2021		
	Մանկապարտեզի պահպանում	99.000.0	16.000.0	22.000.0	20.400.0	20.300.0	20.300.0	2017	2021
	Գազաֆիկացում	1.000.0	1.000.0					2017	2017

## 6 ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Իրականացվող բոլոր ծրագրերը պետք է ենթարկվեն մոնիթորինգի: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել Մոնիթորինգը իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները:

Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի է հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում:

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Հակակարկտային կայանների տեղադրում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		5600000	5600000	5600000	5600000	5600000	5600000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		5600000	5600000	5600000	5600000	5600000	5600000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Ամեն տարի համայնքի համար ձեռք բերել և տեղադրել 2 հակակարկտային կայաններ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 28.000.000դր Ընդհանուր բյուջեն՝ 28.000.000դր						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում տեղադրել հակակարկտային կայանների, ինչը կխթանի գյուղատնտեսության զարգացմանը:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2000000	2000000	2000000	2000000	2000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2000000	2000000	2000000	2000000	2000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Նախապատրաստել ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը Բարեկարգել ներհամայնքային ճանապարհները Կազմել, քննարկել և ընդունել ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10.000.000 Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 10.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, ավագ, խճաքար						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բարեկարգումն իրականացվում է խճաավագային խառնուրդով և երկար չի ծառայում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բարեկարգել ներհամայնքային ճանապարհները, վերացնել ջրափոսերը, դրանք դարձնել անցանելի և հարմարավետ:						



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Փողոցների գիշերային լուսավորության անցկացում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ունենալ լուսավոր համայնք						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			5000000	3000000	4000000	4000000	4000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			5000000	3000000	4000000	4000000	4000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>Կազմել լուսավորվող փողոցների ցանկը</p> <p>Կազմել լուսավորության նախագծանախահաշվային փաստաթղթերը</p> <p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրել կապալառու</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 20000000 դր</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 20000000 դր</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, հյուրեր						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում անցկացնել գիշերային լուսավորություն, ապահովել բնակիչների անվտանգ և ապահով տեղաշարժը:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Խաղահրապարակի և զբոսայգու հիմնում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	առողջ ապրելակերպի խրախուսում, երեխաների ներդաշնակ զարգացում, զբոսայգու հիմնում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			8000000	12000000			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			8000000	12000000			
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, վերանայում ոռոգման ջրի համակարգի կառուցում, կանաչապատում, կարուսելների և նստարանների տեղադրում, լուսավորության համակարգի ստեղծում, WiFi ցանցի ստեղծում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 20000000 դր Ընդհանուր բյուջեն՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բարեգործական կազմակերպությունների ներգրավման դժվարություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Խաղահրապարակի և զբոսայգու հիմնում, կարուսելների, նստարանների տեղադրում, դեկորատիվ ծառերի, խոտերի, թփերի տնկում						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Ամբողջ համայնքում աղբահանության կազմակերպում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ունենալ մաքուր, գրավիչ համայնք						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2500000	3500000	3000000	3000000	3000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2500000	3500000	3000000	3000000	3000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Ձեռք բերել աղբը բարձող մեքենա Սահմանել աղբահանության նոր գրաֆիկ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 15000000 Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 15000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակիչներից աղբահանության գումարների գանձում						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ամբողջ համայնքում աղբահանության աշխատանքների կազմակերպում, մաքրության ապահովում:						

# Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## «Կանաչ գոտիների ստեղծում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Օդի աղտոտվածության նվազեցում, թթվաձնի քանակի ավելացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000000	1000000	1000000		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000000	1000000	1000000		
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Համայնքում ծառատունկերի կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3000000 Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 3000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառեր, թփեր, խոտաբույսեր, ծաղիկներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Սակավաջրություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը դարձնել կանաչապատ և գրավիչ						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Մշակույթի տան նախասրահի և դահլիճի նորոգում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մշակույթային կյանքի ակտիվացում, մշակույթային ժառանգության պահպանում և զարգացում:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000000	2000000	6000000	10000000	11000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000000	2000000	6000000	10000000	11000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>Պատրաստել մշակույթի տան նախասրահի և դահլիճի նորոգման աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը</p> <p>Դիմել բարեգործական և պետական կազմակերպություններին մշակույթի տան նախասրահի և դահլիճի վերանորոգման աշխատանքների համաֆինանսավորման նպատակով:</p> <p>Կնքել պայմանագիր աշխատանքներն իրականացնող մասնագիտական խմբի հետ</p> <p>Իրականացնել մշակույթի տան նախասրահի և դահլիճի նորոգման աշխատանքները</p> <p>Վերահսկել աշխատանքների կատարումը և դահլիճն ու նախասրահը հանձնել շահագործման</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 30000000</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 30000000</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մշակույթի տան նախասրահի և դահլիճի վերանորոգում:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Համայնքի մանկապարտեզի պահպանում և գազաֆիկացում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում 15 աշխատատեղի պահպանում, մանկապարտեզ հաճախող երեխաների թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետություն, աշխատատեղերի պահպանում::						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			17000000	22000000	20400000	20300000	20300000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			17000000	22000000	20400000	20300000	20300000
	2.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Մանկապարտեզի շենքի գազաֆիկացում Աշխատողների աշխատավարձի վճարում Մանկապարտեզին անհրաժեշտ գույքի ձեռքբերում Մանկապարտեզի տարածքի բարեկարգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 70.000.000 Կապիտալ ծախսեր՝ 30.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 100.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական և բարեգործական կազմակերպությունների կողմից ֆինանսավորում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկապարտեզի գազաֆիկացում, ամբողջ տարին գործարկում:						